ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«07» սեպտեմբերի 2023 թ. N 134-Ա/Լ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԵՐԵԽԱ ԽՆԱՄՈՂ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 12-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հաշմանդամություն ունեցող կամ առողջական խնդիրներով երեխա խնամող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար նախատեսված վերապատրաստման դասընթացի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ վերապատրաստման դասընթացը կազմակերպել և անցկացնել հեռավար եղանակով՝ առաջնորդվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում՝ դասընթացի մասին հայտարարությունը (առանց հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երեխա խնամող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց անձնական տվյալները հրապարակելու), ինչպես նաև 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1

հրամանով հաստատված հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երեխա խնամող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար նախատեսված վերապատրաստման դասընթացի թեմաները և ուսումնական նյութերը տեղադրել նախարարության պաշտոնական կայքերում:

4. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երեխա խնամող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ցուցակները, ինչպես նաև այդ անձանց անձնագրերի/նույնականացման քարտերի պատճենները տրամադրել «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

5. Նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝

1) վերապատրաստման դասընթացն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացնել դասընթացներն ավարտած մասնակիցների ցանկերը՝ դրանում ներառելով մասնակցի անունը, ազգանունը և անձնագրային տվյալները,

2) մինչև սույն թվականի հոկտեմբերի 6-ը՝ նախարարություն ներկայացնել հաշվետվություն անցկացված դասընթացի վերաբերյալ՝ ներառելով մասնակիցների առաջարկությունները և գոհունակության գնահատման արդյունքները:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

9/7/2023

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2023 թվականի սեպտեմբերի 07 - ի N 134-Ա/Ք հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱ ԽՆԱՄՈՂ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Խմբի համարը	Խմբում ընդգրկված ունկնդիրների թիվը	Դասընթացում ընդգրկված ունկնդիրների մշտական բնակության վայրը	Դասընթացի անցկացման եղանակը	Դասընթացի անցկացման ժամկետը	Դասընթացի ծավալը
1	11	1. Կոտայքի մարզ, 5 ունկնդիր 2. Երևան քաղաք, 3 ունկնդիր 3. Արարատի մարզ, 3 ունկնդիր	Հեռավար	18. 09.2023-26.09.2023 Ժամը 11:00-13:30	24 ժամ